

ՎԶԵԲ

Ծրագրի ամփոփ փաստաթուղթ

Ծրագրի անվանում	Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր
Երկիր	Հայաստան
Ծրագրի համարը	46437
Բիզնես ոլորտ	Համայնքային և բնապահպանական ենթակառուցվածքներ
Պետական/Մասնավոր	Պետական ոլորտ
Բնապահպանական դասակարգում	Բ կարգի դասակարգում
Խորհրդի նիստի ակնկալվող ամսաթիվը	2015թ. մայիսի 06-ը
Կարգավիճակ	Հայեցակարգն ուսումնասիրվել է, սպասվում է վերջնական վերանայում
Ծրագրի ամփոփված պատասխանի հրապարակման ամսաթիվը	2015թ. մարտի 06-ը
Ծրագրի նկարագիրը և նպատակները	ՎԶԵԲ-ը դիտարկում է մի ծրագրի ֆինանսավորման հարցը, որի նպատակը Հայաստանի մայրաքաղաք Երևանում փողոցների լուսավորության ցանցի վերականգնումն ու արդիականացումն է: Ծրագրի հիմնական բաղադրիչներն են. առաջնային և երկրորդական փողոցներում 80

կմ ստորգետնյա մալուխների անցկացումը, գոյություն ունեցող լուսատուների փոխարինումը ժամանակակից էներգաարդյունավետ տեխնոլոգիաներով և ավտոմատացված վերահսկման և էներգիայի մոնիտորինգի հնարավորություններով լուսավորության կառավարման կենտրոնական համակարգի տեղադրումը: ՎՋԵԲ-ի վարկի միջոցները կօգտագործվեն պիլոտային ծրագիրը ֆինանսավորելու նպատակով՝ վերանորոգելու փողոցների լուսավորության ցանցը Երևանի 28 փողոցներում:

Անցումային շրջանի վրա ազդեցություն

1. Մասնավոր հատվածի մասնակցություն և ինստիտուցիոնալ ուժեղացում.

Ծրագրի կապալառման պայմանագիրը կնքվելու է նախագծման-տեղադրման-տեխսպասարկման հիմունքներով այն ընկերության հետ, որը կընտրվի մրցութային թափանցիկ գործընթացի արդյունքում: Մրցույթի հաղթող մասնակիցը պետք է ներկայացնի էներգախնայողության թիրախները, իրականացնի սարքավորումների տեղադրումը և ապահովի տեղադրված տեխնիկայի աշխատանքի բազմամյա երաշխիք:

2. Լավագույն առկա տեխնոլոգիաների ներդրման հետ կապված՝ նոր կրկնօրինակելի մոտեցումների/հմտությունների ցուցադրում:

Ծրագիրը ներառում է կայուն էներգիայի առաջավոր տեխնիկական լուծումների ներդրում, որոնք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին: Մնդիկային լուսատուների օգտագործման կրճատումը կնվազեցնի բնապահպանական ռիսկերը աղբավայրերում: Երևանի փողոցների ավելի լավ լուսավորությունը կբարելավվի ճանապարհային երթևեկության անվտանգությունը, կարող է նվազեցնել

	<p>հանցագործության ցուցանիշները և նպաստել քաղաքում հասարակական վարքի բարելավմանը:</p> <p>Անցումային շրջանի վրա ազդեցության հենանիշները ներառում են.</p> <p>(i) լուսային դիոդների (LED) վրա հիմնված՝ փողոցների լուսավորության լուծումների վերօրինակումը երկրի առնվազն երկու այլ համայնքներում, կամ ավելի լայն՝ Կովկասի տարածաշրջանում, եթե անհրաժեշտ լինի ներառել բավականաչափ մեծ համայնքներ:</p> <p>(ii) մասնավոր հատվածի հետ կատարողականի վրա հիմնված, բազմամյա, փողոցների լուսավորության պայմանագրերի վերօրինակումը երկրի առնվազն երկու այլ համայնքներում, կամ ավելի լայն՝ Կովկասի տարածաշրջանում, եթե անհրաժեշտ լինի ներառել բավականաչափ մեծ համայնքներ:</p>
Անցումային շրջանի վրա ակնկալվող ազդեցության գնահատականը	Չափավոր / Լավ, միջին ռիսկայնությամբ
Հաճախորդ	Վարկառու կլինի Հայաստանի Հանրապետությունը: Ներդրումների կիրառման համար պատասխանատուն կլինի Երևանի քաղաքապետարանի՝ «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» փակ բաժնետիրական ընկերությունը:
ՎՋԵԲ-ի տրամադրած ֆինանսավորումը	Մինչև 4 մլն ԱՄՆ դոլար սուվերեն վարկ, որը կհամալրվի մինչև 2 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհային բաղադրիչով, որը կհատկացվի միջազգային դոնորի կողմից (ճշգրիտ աղբյուրը ենթակա է հաստատման):
Ծրագրի ընդհանուր	Ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվում է

գումարը	մինչև 7 մլն ԱՄՆ դոլար, ներառյալ տեխնիկական աջակցությունը:
<p>Բնապահպանական և սոցիալական դասակարգում, ազդեցություն և իրավիճակի մեղմացում</p>	<p>Առաջարկվող Ծրագիրը դասակարգվել է որպես Բ կարգի ծրագիր ՎՋԵԲ-ի՝ 2014թ. Բնապահպանական և սոցիալական քաղաքականության համաձայն, քանի որ ակնկալվում է, որ պոտենցիալ ազդեցությունները կլինեն կոնկրետ կայքին բնորոշ, հեշտությամբ հայտնաբերվող և մեղմացման միջոցառումների օգնությամբ շտկվող:</p> <p>Ներկայումս անցկացվում է Ծրագրի բնապահպանական և սոցիալական ասպեկտների քննություն, որը ներառում է. անկախ երրորդ կողմի բնապահպանական և սոցիալական աուդիտ՝ գնահատելու Հաճախորդի կառավարման կարողություններն ու համակարգերը, որոնք նա կիրառում է իր գործունեության ընթացքում շրջակա միջավայրի, առողջապահության, անվտանգության և աշխատանքային խնդիրների կառավարման նպատակով, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական պոտենցիալ (ապագա) հետևանքների և օգուտների վերլուծություն: Այն նաև կգնահատի Հաճախորդի կարողությունը՝ իրականացնելու Ծրագիրը համաձայն կատարողականի նկատմամբ Բանկի պահանջների:</p> <p>Ծրագրի համար կմշակվի Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլան (ԲՄԳՊ), ինչպես նաև կմշակվի Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան, որը կներառի բողոքարկման մեխանիզմ և տեղեկություններ բնապահպանական և սոցիալական պահանջների կատարման մասին, իսկ գործողությունների համաձայնեցված պլանի ամփոփ նկարագիրը կներկայացվի Շահագրգիռ կողմերին:</p> <p>Սույն ծրագրի ամփոփ փաստաթուղթը կթարմացվի, երբ բնապահպանական և</p>

սոցիալական ասպեկտների քննության արդյունքներն ակնառու դառնան:

Տեխնիկական աջակցություն

Տեխնիկական ծավալների քննությունը՝ գնահատելու Ծրագրի իրագործելիությունն ու ծավալը տեխնիկական, ինժեներական և ինստիտուցիոնալ տեսակետներից, ֆինանսավորվել է *TaiwanBusiness*-ՎՋԵԲ տեխնիկական համագործակցության հիմնադրամի կողմից (260,000 եվրո): Այս առաջադրանքն ավարտված է:

Բացի այդ, Ծրագրի համար իրականացվել է վարկային վերլուծություն (25,850 եվրո): Տեխնիկական այս աջակցությունը ֆինանսավորվել է ՎՋԵԲ-ի ներքին աղբյուրներից: Այս առաջադրանքն ավարտված է:

Ստորագրմանը հաջորդող փուլում նախատեսված է իրականացնել տեխնիկական աջակցության երկու առաջադրանք.

- Ծրագրի իրականացման հարցերում աջակցություն. միջազգային խորհրդատուները կաջակցեն ծրագրի իրականացման խմբին տեխնիկական նախագծման, մրցույթների պատրաստման, գնումների և գնահատման, պայմանագրի շնորհման և կառավարման, ֆինանսական հսկողության, ծրագրի կառավարման և հաշվետվությունների հետ կապվախ հարցերում (315,000 եվրո): Աջակցությունը կֆինանսավորվի միջազգային դոնորի կողմից կամ ՎՋԵԲ-ի Բաժնետերերի Հատուկ Հիմնադրամից (ԲՀՀ):
- Քաղաքապետարանի կարողությունների ուժեղացման աջակցություն. Խորհրդատվություն՝ աջակցելու Երևանի

	<p>քաղաքապետարանին ինստիտուցիոնալ ուժեղացման և կարողությունների ստեղծման հարցերում՝ փողոցների լուսավորության գործողությունների մոնիտորինգի ուսուցման միջոցով, ինչպես նաև տեխնիկական սպասարկման պայմանագիր (225,000 Էվրո): Կֆինանսավորվեն միջազգային դոնորի կողմից կամ ՎՋԵԲ-ի Բաժնետերերի Հատուկ Հիմնադրամից (ԲՀՀ):</p>
<p>Գնումներին կամ տեղերին մասնակցելու հնարավորություն</p>	<p>Այցելեք. EBRD Procurement Տեղեկատվություն. Հեռ.՝ +44 20 7338 6794; Ֆաքս՝ +44 20 7338 7472 Էլ.փոստ՝ procurement@ebrd.com</p>
<p>Ընդհանուր տեղեկատվություն</p>	<p>ՎՋԵԲ-ի ծրագրերի մասին տեղեկատվություն, որն առնչություն չունի գնումների հետ: Հեռ.՝ +44 20 7338 7168; Ֆաքս՝ +44 20 7338 7380 Էլ.փոստ՝ projectenquiries@ebrd.com</p>
<p>Հանրային տեղեկատվական քաղաքականություն (ՀՏՔ)</p>	<p>Հանրային տեղեկատվական քաղաքականությունը ի ցույց է դնում, թե ինչպես է ՎՋԵԲ-ը ներկայացնում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկումը: Հանրային տեղեկատվական քաղաքականության տեքստ. http://www.ebrd.com/pages/about/what/policies/pip.shtml</p>
<p>Ծրագրերի բողոքարկման մեխանիզմ (ՕԲՄ)</p>	<p>ՎՋԵԲ-ը հիմնել է Ծրագրերի բողոքարկման մեխանիզմը (ՕԲՄ), որպեսզի այն Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր վնասակարության մասին անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ</p>

	<p>ուսումնասիրություն անցկացնի:</p> <p>ԾԲՄ-ի կանոնակարգը Ռուսերեն տարբերակը. http://www.ebrd.com/documents/occo/pcm-rules-of-procedure-in-russian.pdf</p> <p>ԾԲՄ-ի ներքո յուրաքանչյուր բողոք պետք է ներկայացվի ՎՋԵԲ-ի ֆինանսավորման վերջին տրանշից ոչ ուշ քան 12 ամսվա ընթացքում: Կարող եք կապվել ԾԲՄ-ի տնօրենի (pcm@ebrd.com) կամ ՎՋԵԲ-ի համապատասխան տեղական գրասենյակի հետ, եթե վստահ չեք, թե որ ժամանակահատվածում պետք է ներկայացնեք բողոքը:</p>
--	--
